

Հ ա ս տ ա տ ու մ ե մ`



ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական  
մասնագիտությունների գծով

պրոֆեսոր Է. Ասրիյան

« 22 » 09, 2020թ

### Կ Ա Ր Ծ Ի Ք

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նարեկ Հրանտի Գրիգորյանի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Եզրակացությունը հաստատվել է ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի 2020թ. սեպտեմբերի 18-ի նիստում:

Նիստին մասնակցում քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Քեռյանը, քաղ գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Մարգարովը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Մանուկյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Դ. Շափաղաթյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Ա. Ղևոնդյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Ն. Գալստյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոց. Մ. Սողոմոնյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Վ. Մարտիրոսյանը, քաղ. գիտ. թեկն. Ց. Ակոպյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոց. Լ. Զովսեփյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Դ. Մկրտչյանը, ասիստենտ Մ. Ալիխանյանը, ասիստենտ Ն. Մկրտչյանը

Նարեկ Գրիգորյանի ատենախոսության թեման արդիական է, որովհետև Հայաստանում, սահմանադրական բարեփոխումներին հաջորդած քաղաքական գործընթացները խիստ անհրաժեշտ են դարձնում ժողովրդավարության ձևերի

իրավաքաղաքական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության գործառնման շրջանակներում: Նման վերլուծությունը կարևոր ու արդիական է նաև պետության քաղաքական զարգացման ուղենիշներն ու կողմնորոշման առանձնահատկությունները վերհանելու և հետագա զարգացման հեռանկարներն ուրվագծելու տեսանկյունից: Խորհրդարանական կառավարման անցման գործընթացը ներկայումս թևակոխել է զարգացման նոր փուլ և բնականաբար ժողովրդավարական հարաբերությունների թարմացման շրջանը համընկավ նաև ներքաղաքական տեղաշարժերի հետ, ինչն անհրաժեշտ է դարձնում թեմայի շուրջ գիտական ուսումնասիրությունների իրականացումը: Ժամանակակից քաղաքական գործընթացներում կոնսոցիատիվ ժողովրդավարության ձևերի բաղադրիչի նշանակության աճով պայմանավորված արդիական են հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները: Հետևաբար խորհրդարանական կառավարման համակարգում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանականության արդյունավետության բարձրացման նպատակով կոնսոցիատիվիզմի ներդրման հնարավորությունների ուսումնասիրությունն առավել քան արդիական է:

Ատենախոսության նպատակները՝ գիտական են: Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է կոնսոցիատիվ ժողովրդավարության ձևավորման և կայացման գործընթացի առանձնահատկությունները, բացահայտել դրա կիրառման միջազգային փորձը, ինչպես նաև՝ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունները և խոչընդոտները՝ ՀՀ օրինակով: Վերլուծվել է կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսական և գործնական հիմքերը, բացահատված են կոնսոցիատիվիզմի գործառության մեթոդաբանությունը և իրականացման մեխանիզմները: Բավականին հիմնավոր համեմատելով ժողովրդավարության կոնսոցիատիվ և այլ տեսությունները, փորձ է արվել վերհանել կոնսոցիատիվիզմի առանձնահատկությունները:



Արժևորում ենք հատկապես այն հանգամանքը, որ հետազոտությունը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում ընդգրկել է նաև պետական կառավարման համակարգերը: Ատենախոսության այս հատվածներում առկա են խորհրդարանական կառավարման տիպերի, խորհրդարանական մշակույթի, լավ կառավարման կիրառական կողմերի բավականին ուրույն գիտական ուսումնասիրության արդյունքներ:

Գիտական նորույթի առումով արժևորում ենք ատենախոսության այն հատվածը, որտեղ հեղինակը բացահայտել է ՀՀ կառավարման համակարգում խորհրդարանականության և համապատասխան քաղաքական մշակույթի գիտակիրառական խնդիրները և ՀՀ խորհրդարանական կառավարման արդյունավետության նպատակով կոնսոցիատիվ մոտեցման կիրառման հնարավորությունները:

Մեր համոզմամբ, այս հետազոտությունը օգտակար է կոնսոցիատիվ ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքերի, ձևերի և նրա ինստիտուտների դասակարգումը գիտականորեն պատկերացնելու և ՀՀ սահմանադրական բարեփոխումների համատեքստում ժողովրդավարության ձևերի զարգացման համար: Գիտական հենքի վրա հաջողվել է բացահայտել այն առանձնահատկությունները, որոնք կոնսոցիատիվ ժողովրդավարությունը բաժանում են ժողովրդավարության մյուս ձևերից: Քաղաքագիտական թարմ մոտեցումների հիման վրա արված հետազոտությունը կարևոր է նաև ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան ժողովրդավարական երկրներում ժողովրդավարության տիպաբանության համար: Այս ուղղությամբ ատենախոսության մեջ առկա առաջարկություններն ու եզրահանգումները ունեն գիտական բնույթ::

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են թեմայի ուսումնասիրության հետ կապված տեսական հիմքերն ու հիմնական աղբյուրները: Օգտագործվել են ժամանակակից ընդհանրացնող աշխատություններ, գիտական մենագրություններ, հրապարակված փաստաթղթեր: Հայաստանի և արտերկրի գիտական դիսկուրսում կոնսոցիատիվ ժողովրդավարությանն առընչվող քաղաքական գործընթացների շուրջ առկա

մոտեցումների ուսումնասիրման նպատակով օգտագործվել են տարբեր երկրների գիտական վերլուծական հաստատությունների հետազոտական նյութերը:

Հետազոտության գիտական նորույթը հստակորեն ձևակերպված է առանձին դրույթներով, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Արժևորում ենք նաև ժողովրդավարության այս ձևի ձևավորումն ու զարգացումը՝ որպես ներքին քաղաքականության, անվտանգության ապահովման, ինչպես նաև արժեքային ընդլայնման կարևորագույն գործիք բացահայտելը: Էմպիրիկ ուսումնասիրության արդյունքները գուցե ավելի են սեփական վերլուծության հետ:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և բավականին արժեքավոր Հայաստանի քաղաքական գիտությունների համար: Ատենախոսական աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով հեղինակը հանգել է այն եզրակացության, որ պետք է առավելագույնս զարգացնել կոնսոցիատիվ ժողովրդավարությունը: Այս առումով հիմնավորված է Հայաստանը ժողովրդավարական զարգացած երկրների քաղաքական ու իրավական համակարգերին ու եվրոպական չափանիշներին մոտեցնելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը կարող է նպաստել ԵՄ երկրների հետ գործակցային հարաբերությունների զարգացմանը: Այս և մյուս եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ ներքին քաղաքական հայեցակարգի առանձին դրույթների մշակման և քաղաքական դիրքորոշումների պարզեցման համար:

Ատենախոսությունը գերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալը.

- Առկա հայրենական և արտասահմանյան հետազոտողների գերակշիռ մասը, ինչպես նաև միջազգային դիտորդական կազմակերպություններն ու հետազոտողները, հետխորհրդային պետությունների մեծ մասը, բացի մերձբալթյան երկրներից, համարում է անցումային փուլը չավարտած դեռևս ոչ լիարժեք, այսպես կոչված „մականունավոր ժողովրդավարություններ,, ունեցող երկրներ: Քանի որ, կոնսոցիատիվ ձևը, բնորշ է առավել զարգացած և դասական ժողովրդավարական համակարգերին, մենք գտնում ենք, որ Հայաստանը որպես հետազոտության օբյեկտ ընտրելը միգուցե դեռևս վաղաժամ էր:



- Ատենախոսական աշխատանքում առկա հարցադրումները և հետազոտված նյութը ունեն որոշակի տեսական բնույթ: Աշխատանքը կշահեր եթե ատենախոսության առաջին և երկրորդ գլուխներում առկա տեսական նյութը համադրվեր պրակտիկ օրինակներով:
- Երրորդ գլուխը, որը վերնագրված է «ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկությունները և կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունները», որոշակի մտահոգություններ է ծնում, կրկին ժամանակավրեպության առումով: Փաստացիորեն լիարժեք խորհրդարանական կառավարման կիրառումը տեղի ունեցավ միայն 2018 թ. դեկտեմբերյան արտահերթ ընտրություններից հետո և այն մեկ ու կես տարվա պատմություն ունի: Այս ժամանակահատվածը շատ կարճ է քաղաքագիտական հետևություններ անելու և խորհրդարանական կառավարման առանձնահատկությունները պարզելու համար:
- Էջ 15 – ում որպես նորույթ նշված հետևյալ միտքը. «Ապացուցվել է, որ խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությունը պայմանավորված է խորհրդարանականության քաղաքական մշակույթի առկայությամբ և կայացած կուսակցական համակարգի հաստատուն գործառությամբ», իրականում հանրահայտ ճշմարտություն է:

Սակայն այս թերությունները չեն զցում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսության բոլոր հատվածում առկա են թարմ և արժանահավատ գնահատականներ և համեմատություններ:

Չեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն: Նա ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան կարողացել է բարձրացնել գիտական խնդիր: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից Երևանի պետական համալսարանի Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ ԻԳ.00.02 –

«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նարեկ Հրանտի Գրիգորյանի «Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

ԵՊՀ քաղաքական ինստիտուտներ և գործընթացների ամբիոնի վարիչ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Քեռյան Գ.Մ. Քեռյան

Քաղ. գիտ. դոկտոր Գ. Քեռյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար,

պատմ. գիտ. թեկն. Լ. Հովսեփյան Լ. Հովսեփյան

« 22 » 09 2020թ

